# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2026 թվականի N 81-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1485-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1485-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման նախաբանում «և «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը» բառերը փոխարինել «, «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը և «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը» բառերով.

2) որոշման հավելվածի 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ ենթակետով՝

«3.2) 2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կտրամադրվի ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 40-60 (ներառյալ) տոկոսի չափով սուբսիդավորում.».

3) որոշման հավելվածի 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին ենթակետով՝

«10.1) ծրագրի շրջանակում կարող է իրականացվել գործակալության անդամ ապահովագրական ընկերությունների կողմից ընդհանուր հավաքագրված (հաշվեգրված) ապահովագրավճարի հանրագումարի սահմանված շեմը գերազանցած ապահովագրական հատուցումների (տնտեսավարողներին փոխհատուցված ապահովագրական հատուցումների և փաստացի իրականացված վնասների գնահատման ծախսերի հանրագումար (այսուհետ՝ ապահովագրական հատուցում) գումարի փոխհատուցում: Ընդ որում, սույն ենթակետի հաշվարկում ներառվող փաստացի իրականացված վնասի գնահատման ծախսերի առավելագույն չափը տնտեսավարողներին փոխհատուցված ապահովագրական հատուցումների նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ, սահմանում է գործակալության խորհուրդը.».

4) որոշման հավելվածի 33-րդ կետի 12-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

5) որոշման հավելվածի 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ ենթակետով՝

«13) 2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար գործակալության անդամ յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը փոխհատուցվում է նաև ապահովագրական հատուցումների այն մասը, որը գերազանցում է հավաքագրված (հաշվեգրված) ապահովագրավճարի 80 տոկոսը:».

6) որոշման հավելվածի 35.1-ին կետում «2024 և 2025 թվականների գյուղատնտեսական» բառերը փոխարինել «2024, 2025 և 2026 թվականների գյուղատնտեսական» բառերով, «և 12-րդ (2025 թվականի համար)» բառերը փոխարինել «, 12-րդ (2025 թվականի համար) և 13-րդ (2026 թվականի համար)» բառերով, «հատուցումների գործընթացն» բառերը փոխարինել «հատուցումների գործընթացը յուրաքանչյուր ամիս» բառերով, իսկ «տնտեսավարողներին փոխհատուցված» բառերը հանել.

7) որոշման հավելվածի 43-րդ կետում «բացառությամբ 2019, 2024 և 2025 թվականների բյուջեների, որոնք ամբողջությամբ կձևավորվեն կողմ 2-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվին, եթե KfW-ի կողմից 2025 թվականի ֆինանսավորման համար այլ որոշում (առաջարկ) չներկայացվի» բառերը փոխարինել «բացառությամբ 2019, 2024, 2025 և 2026 թվականների բյուջեների, որոնք ամբողջությամբ կձևավորվեն կողմ 2-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվին» բառերով, «2025 թվականը ներառյալ՝» բառերը փոխարինել «2026 թվականը ներառյալ՝» բառերով, իսկ «գումարը) ֆինանսավորումը կիրականացվի կողմ 2-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվին:» բառերից հետո լրացնել «2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար նախատեսված ապահովագրական ընկերություններին փոխհատուցվող գումարի (ապահովագրական հատուցումների այն մասը, որը գերազանցում է հավաքագրված (հաշվեգրված) ապահովագրավճարի 80 տոկոսը) ֆինանսավորումը կիրականացվի կողմ 2-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվին:» նախադասությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

22.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ